ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

12.02.2014 17:20

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

վերապատրաստման դասընթացների անցկացման վերաբերյալ

12.02.2014թ.

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. 3/6-Լ որոշմամբ 2014 թվականի փետրվարի 6-ից ուժի մեջ է մտել Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամաքանակը և կարգը:

Տեղեկացնում ենք, որ տարեկան 24 ժամ վերապատրաստում անցնելու հաշվարկը փոխվել է և սահմանվել է **հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը**, ի տարբերություն նախկինում գործող **մարտի 1-ից մինչև մյուս տարվա մարտի 1-ի**:

Վերոգրյալը հաշվի առնելով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ նոր ծրագրեր կազմելու և դասընթացավարների ընտրությունը կազմակերպելու գործընթացը դեռ չի ավարտվել, **ՀՀ փաստաբանների պալատը**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է, որ՝

- **չեղյալ են հայտարարվում այն վերապատրաստման դասընթացները, որոնք նշանակվել են փետրվարին և դեռ չեն անցկացվել.**

- **իրենց ժամաքանակները մինչև 2014թ. մարտ ամիսը լրացնելու անհրաժեշտությունը վերացել է և այն կարող եք լրացնել մինչև 2014թ. դեկտեմբեր ամիսը:**

ՀՀ փաստաբանների պալատ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })